ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Առողջության համապարփակ ապահովագրության մասին>> օրենքի նախագծի և դրան հարակից օրենքների նախագծերի աշխատանքային քննարկման համար ներկայացված առաջարկների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** յուրաքանչյուր տարի տարվա պետական բյուջեն Ազգային ժողովում հաստատելիս **առանձին** հաստատել նաև առողջապահության ապահովագրության տարեկան բյուջեն: Ելնելով դրանից, առաջարկում եմ նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվող ապահովագրավճարի դրույքաչափը, պլանային տարվա համար, նույնպես սահմանել յուրաքանչյուր տարվա բյուջեում՝ կառավարության առաջարկությամբ հաստատելով Ազգային ժողովում՝ ինչպես նախատեսված է նախագծի 13-րդ հոդվածի 12-րդ մասով՝ պետության կողմից ֆինանսավորվող առողջապահության համապափակ ապահովագրվող անձանց համար: Վերն ասվածը վերածելով նախագծի համապատասխան դրույթների և ելնելով նրանից, որ նախագծով ստեղծվող հիմնադրամի հիմնադիրը ՀՀ կառավարությունն է, **առաջարկում եմ** նախագծի 33-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. <<Հիմնադրամի տվյալ տարվա բյուջեն առանձին հաստատման է ներկայացվում Ազգային ժողով յուրաքանչյուր տարվա բյուջեի հաստատմանը զուգահեռ:>>: **Առաջարկում եմ նաև** 33-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով. <<Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվություն հետ զուգահեռ մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում առողջապահության ապահովագրության տարեկան բյուջեի տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև առողջության համապարփակ ապահովագրության գործընթացի վերահսկողությունն իրականացնող գործադիր հանձնաժողովի պաշտոնական եզրակացությունը:>>: Ելնելով վերն արված առաջարկից, **առաջարկում եմ** նախագծի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ. <<2) սույն օրենքի 11-րդ հոդված 2-րդ մասի 1-ից 10-րդ կետերով սահմանված կարգավիճակն ունեցող բնակչության խմբերի համար Պետական բյուջեի հատկացումներից. >>:

Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	Ելնելով նրանից, որ նախագծով ստեղծվող հիմնադրամի հիմնադիրը ՀՀ կառավարությունն է և առաջարկելով հիմնադրամի բյուջեն կառավարության ներկայացմամբ հաստատել Ազգային ժողովում, **Առաջարկում եմ** <<հիմնադրամի բյուջե>> հասկացության փոխարեն օգտագործել <<առողջության համապափակ ապահովագրության ֆոնդ>> հասկացությունը: **Առաջարկում եմ** նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում որպես հիմնական հասկացություն սահմանել <<առողջության համապափակ ապահովագրության ֆոնդ>> և <<առողջության համապափակ ապահովագրության պահուստային ֆոնդ>> հասկացությունները:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	Առաջարկում եմ նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասում հոգաբարձուների խորհրդի կազմում նախատեսել նաև օրենսդիր մարմնի ներկայացուցիչ:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** նախագծի 1-ին հոդվածում արձանագրել նաև <<ապահովագրություն չունեցող անձանց>>, քանի որ նրանք նույնպես հանդիսանում են սույն օրենքի կարգավորման առարկա: Այսինքն, մի շարք հոդվածներով կարգավորվում են նաև ապահովագրություն չունեցող անձանց առողջության համապարփակ ապահովագրության հետ կապված հարաբերությունները:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում որպես հիմնական հասկացություն սահմանված <<առողջության համապափակ ապահովագրություն>> և <<ապահովագրական փաթեթ>> և <<ապահովագրական դեպք>> սահմանումների մեջ <<կամ>> բառերը դարձնել <<և/կամ>> բառեր:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում <<ապահովագրական դեպք>> հասկացության սահմանման մեջ <<բացառությամբ առողջության առաջնային պահպանման ծառայությունների, որոնց ֆինանսավորման առանձնահատկությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ>> նշումը: Արդյոք՝ ԱԱՊ ծառայությունները չեն համարվում ապահովագրական դեպքեր: Արդյոք՝ ԱԱՊ օղակը չի մասնակցելու հատուցման գործընթացներին: Արդյոք՝ սա նշանակում է, որ ԱԱՊ-ն շարունակելու է ֆինանսավորվել նախկին per capita բանաձևով:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** հանել նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 16-րդ, 17-րդ և 27-րդ կետերը, քանի որ այդ կետերով սահմանված հասկացությունները, սահմանված են համապատասխան օրենքներում:
Նարեկ	«Առողջության	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ

Զեյնալյան	համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	կետում սահմանված՝ <<պարտադիր կանխարգելիչ բժշկական զննություն>> հասկացությունը: Արդյոք՞ ենթադրվում է, որ բացի ԱԱՊ-օղակից, բժշկական կազմակերպությունները ևս իրականացնելու են պարտադիր կանխարգելիչ բժշկական զննություններ, եթե այո, ապա ինչպես է իրականացվելու դրա ֆինանսավորումը, արդյոք՞ այն համարվելու է ապահովագրական դեպք:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասում ապահովագրական փաթեթի փոփոխությունների հանգամանքները: Քանի՞ ապահովագրական փաթեթ կա և դրանք ինչ՞ ծավալներ են ներառում: Բացի դրանից, որ՞ մարմինն է իրականացնում փոփոխությունները և ինչ վերլուծությունների են ենթարկվում դրանք:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված <<համավճարի>> կիրառելիության մասին հարցերը: Օրինակ՝ ենթադրվում է արդյոք՞, թե բժշկական ծառայությունների գները որոշելու են բժշկական կազմակերպությունները, իսկ ապահովագրված անձը վճարելու է ապահովագրական հատուցման չափի տարբերությունը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասն այն տեսակետից, թե ենթադրելի է արդյոք, որ բոլոր դեպքերում է սահմանվում համավճար՝ ապահովագրական փաթեթի մեջ ներառված դեղերի և բժշկական պարագաների համար: Պարզաբանել՝ չգրանցված դեղերի համար ապահովագրական փոխհատուցում լինելու է, թե՝ ոչ:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** վերանայել նախագծի 9-րդ հոդվածով սահմանված <<ապահովագրական դեպք>> հասկացությունը: Հիմնադրամի հետ պայմանագիր կնքած բժշկական կազմակերպություն կամ դեղատուն դիմելը համարել դեպք՝ առանց արդյունք և ավարտ ֆիքսելու, ճիշտ չէ: Բացի դրանից, հարկ է սահմանել, թե դեպքը քանի՞ ծառայություն կարող է պարունակել իր մեջ:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել որոնք են նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում նշված <<օրենքով սահմանված դեպքերը>>: Բացի դրանից, եթե պարզաբանման արդյունքում կան օրենքով սահմանված դեպքեր, ապա **առաջարկում եմ** 3-րդ կետում <<բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի>> բառերը տեղափոխել 3-րդ կետի վերջ:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասը: Այս դրույթից կարելի է՞ ենթադրել, թե սահմանված առավելագույն հատուցման չափն ավելի քան 50 տոկոս գերազանցող գին ունեցող դեղի կամ բժշկական պարագայի համար անձը կատարելու է ամբողջական վճարում:

Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասը: Ինչպես՞ կարող են տարբերակվել ծառայությունների մեջ ընդգրկված դեղերն ու պարագաները պայմանավորված տարիքով, սեռով (կարգավիճակով):
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 8-րդ հոդվածի 8-րդ մասով պայմանավորված որ՞ ծառայությունները ընդգրկված չեն լինելու ապահովագրական փաթեթում:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 8-րդ հոդվածի 10-րդ մասով պայմանավորված՝ սպասման ժամկետը 2 ամիս գերազանցելու դեպքում ինչ՞ կարգավորում է նախատեսվում Փոխհատուցում իրականացվելու է թե՝ ոչ, սանկցիա լինելու է թե՝ ոչ:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում <<սույն կետը չի տարածվում փախստականների և ապաստան հայցողների, նրանց ընտանիքի անդամների նկատմամբ:>> դրույթը: ԼՂ-ից բռնի տեղահանված, փախստական ճանաչված քաղաքացիները լինելու են՞ առողջապահության համապարփակ ապահովագրության շահառուներ, եթե այո, ապա ինչ ծավալով:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասում <<դրույքաչափի հաշվարկը կատարվում է ելնելով առողջության համապարփակ ապահովագրության ծախսերից և պլանային տարում ապահովագրված անձանց թվաքանակից>> արտահայտությունը: Նախագծում ամրագրված 164 000 դրամ դրույքաչափը քանի ապահովագրված անձի հաշվարկով է ներկայացվել: Արդյոք՞ 2027 թվականին նախատեսվում է դրույքաչափի պլանավորված փոփոխություն: Եթե այո, ապա ինչ՞ չափով և ինչ՞ հիմնավորումով է այն իրականացվելու:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել ինչ հիմնավորմամբ է որոշվել նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում արձանագրված <<Հիմնադրամի պահուստային ֆոնդի ձևավորման համար անհրաժեշտ գումարի չափը. >>: Պահուստային ֆոնդի մինիմալ ծավալի սահմանումն ինչ հիմնավորում ունի:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի	**Առաջարկում եմ** պարզաբանել ինչու՞ է ընտրված նախագծի 13-րդ հոդվածի 5-րդ մասում նշված հետևյալ՝ <<քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքներ իրականացնողների դիմաց եկամուտը կամ հաշվետու տարվա ընթացքում հայտարարագրված պասիվ եկամուտի>> սահմանափակումները:

	նախագիծ	Օրինակ՝ մեծ թվով քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքներ իրականացնողներ վճարում են եկամտային հարկ, հետևաբար ինչու՞ է նրանց համար նախատեսված ապահովագրավճարը և դրա փոխհատուցումը կատարվում վարձու աշխատողներից տարբերվող այլ սանդղակով:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել՝ նախագծի 13-րդ հոդվածի 8-րդ մասի <<եկամուտները չեն բավարարում ապահովագրավճարը վճարելու համար>> արտահայտությունը: Ինչ՞ կարգով է այն սահմանվելու:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** նախագծի 13-րդ հոդվածի 11-րդ մասում <<նվազագույն սպառողական զամբյուղ>> հասկացությունը փոխարինել մակրոտնտեսական այլ ցուցանիշով, քանի ու այն վիճակագրական տվյալ է, որը տարվա ընթացքում փոփոխվում է: Առաջարկում եմ պարզաբանել ինչ մեխանիզմով է փոխհատուցվում (վերադարձվում) և ապահովագրավճարը իր վճարած եկամտային հարկից ամբողջությամբ է վճարվելու:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել՝ նախագծի 13-րդ հոդվածի 5-րդ մասն այն տեսանկյունից, թե ինչու՞ է քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողների համար նախատեսվում ապահովագրավճարի փոխհատուցման այլ՝ վարձու աշխատողներից տարբերվող սանդղակ:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել՝ նախագծի 14-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառությունը քաղաքացիաիրավական պայմանագրով եկամուտ ստացող շահառուների մասով: Մասնավորապես՝ հստակեցնել Հարկային մարմնի կողմից հաստատված՝ <<Ապահովագրական վճարի վերաբերյալ>> ամսական հաշվետվության մասին դրույթը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** վերախմբագրել նախագծի 14-րդ հոդվածի 7-րդ մասը այն տրամաբանությամբ, որ անկախ եկամուտի աղբյուրների քանակից, անձը վճարի իր հասանելիք ապահովագրավճարը և բացառվի ավել վճարված գումարի ետ վերադարձի մեխանիզմը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 14-րդ հոդվածի 11-րդ մասը: Ապահովագրվածի կարգավիճակի փոփոխությունը որտեղ է արձանագրվում, որ՞ ծրագրային համակարգերի /բազաների/ ինտեգրման արդյունքում են կիրառություն ունենալու դրանք: Այլ բժշկական ծառայություններից օգտվող անձը բժշկական ծառայություններից օգտվելու փաստը ինչ՞ մեխանիզմով է փոխանցվելու ՊԵԿ-ին:

Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 14-րդ հոդվածի 13-րդ մասում <<հաշվարկման բազան հավասար է զրոյի>> արտահայտությունը: Նշված դրույթը հակասում է 13-րդ հոդվածի տրամաբանությանը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 14-րդ հոդվածի 15-րդ մասն այն տեսանկյունից, որ Արդյոք՞ փոխկապակցված անձանց դեպքում պետության կողմից լրացվելու է ապահովագրավճարի չվճարված մասը(20 %)-ը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** խմբագրել նախագծի 14-րդ հոդվածի 16-րդ մասը, ելնելով նրանից, որ 14-րդ հոդվածի 14-րդ մասի 9-րդ կետում <<փոխանցման հանձնարարական այսուհետ՝ (Ապահովագրավճարների փոխանցման հանձնարարական)>> արտահայտությունը սահմանված է:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նախատեսված տույժերը որ՞ օրենսդրական ակտերով են սահմանվելու և ինչ նվազագույն և առավելագույն չափեր են ունենալու:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել և հիմնավորել նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ մասը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված՝ ապահովագրական դեպք գրանցված չլինելու հանգամանքը ինչ՞ ժամանակահատվածի համար է նախատեսված:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում արձանագրված <<մարմնի զանգվածը>>, <<ծխելը>>, <<ալկոհոլի օգտագործումից հրաժարվելը>> ինչ գործիքներով և ինչ մեխանիզմներով են չափվելու և ինչպես են՞ արտահայտվելու:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ մասում բոնուսային հաշվարկման մեխանիզմը և սանդղակը: Նշված դեպքերից յուրաքանչյուրի համար ինչ՞ ծավալի բոնուս է նախատեսվելու և որ՞ մարմնի կողմից

	մասին» օրենքի նախագիծ	են սահմանվելու դրանք: Նախատեսել բոնուսի հաշվարկման և օգտագործման կարգ:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում արձանագրված՝ <<օրենսդրությանը չհամապատասխանող ապահովագրական փաթեթի տրամադրման դեպքում>> արտահայտությունը: Ապահովագրված անձը ինչպես՞ և ինչ՞ մեխանիզմով պիտի արձանագրի, որ տվյալ դեպքը չի համապատասխանում օրենսդրությանը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ մասում հետևյալ հարցերը. Ում՞ կողմից է սահմանվելու համավճարը. Համավճարը լինելու է ֆիքսված գումար՞, թե տատանվելու է կախված բժշկական կենտրոնից:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի կիրառության մեխանիզմները, այն տեսանկյունից, որ ապահովագրված անձը համապատասխան համավճար չկատարելու դեպքում ապահովագրական փաթեթից օգտվելու է թե՞ ոչ:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 18-րդ հոդվածի 4-րդ մասն այն տեսանկյունից, թե ապահովագրված անձը որ՞ գործառույթով կամ ինչպես՞ կարող է ազդել բժշկական կազմակերպությունների և դեղատների հետ պայմանագրերի փոփոխման վրա:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** վերանայել նախագծի 18-րդ հոդվածի 4-րդ մասն այն տեսանկյունից, որ նույն փաթեթում <<Քաղաքացիական օրենսգրքում>> լրացում կատարելու մասին>> նախագծով սահմանվում է, որ <<Սույն գլխով նախատեսված կանոնները չեն տարածվում <<Առողջության համապարփակ ապահովագրության մասին>> ՀՀ օրենքով նախատեսված հարաբերությունների նկատմամբ>>: <<Քաղաքացիական օրենսգրքի>> 54-րդ գլխի համապատասխան դրույթներով է սահմանվում պայմանգիրը փոփոխելու հարցը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 19-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի կիրառումը: Բժշկական կազմակերպությունը կամ դեղատունը ինչ՞ մեխանիզմով է հատուցելու անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի	**Առաջարկում եմ** նախագծի 19-րդ հոդվածում նախատեսել պատասխանատվության մեխանիզմներ բժշկական կազմակերպությունների և դեղատների համար՝ Հիմնադրամի հետ կնքված պայմանգրերի չկատարման դեպքերում:

	նախագիծ	
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը: Որոնք՞ են <<առողջապահության բնագավառի տվյալների բազաները:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** նախագծի 22-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում արձանագրել կարգեր և մեխանիզմներ սահմանելու մասին դրույթներ:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 23-րդ հոդվածի 3-րդ մասում <<զինվորական գրքույկի համարը>> փաստաթղթի արձանագրված լինելը: Ենթադրվում է, արդյոք՞ որ զինվորական գրքույկի համարը տվյալները ռեգիստրում ներառված լինելը կարող է փոխարինել հանրային ծառայությունների համարանիշ փաստաթղթին: Մինչդեռ, Կառավարության 1999 թվականի <<Անձը հաստատող փաստաթղթի մասին>> թիվ 767 որոշմամբ զինվորական գրքույկը որպես անձը հաստատող փաստաթուղթ է ծառայում միայն պարտադիր զինվորական ծառայության ընթացքում:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** նախագծի 23-րդ հոդվածի 4-րդ մասում հանել <<Սահմանել, որ>> բառերը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** նախագծի 26-րդ հոդվածի վերնագիրը ձևակերպել <<Հիմնադրամի **իրավական** կարգավիճակը>>, իսկ հոդվածի 1-ին մասում <<գործառույթներ>> բառից առաջ լրացնել <<պետական>> բառը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում ամրագրված <<օրենսդրության պահանջների կատարումից բխող այլ պայմանագրեր>> հասկացությունը: Որ՞ դեպքերում հարկ կլինի կնքել օրենսդրության պահանջների կատարումից բխող այլ պայմանագրեր, ինչպիսի պայմանագրերի մասին է խոսքը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 29-րդ հոդվածի 6-րդ մասի 14-րդ կետի <<փորձագիտական աշխատանքների իրականացման կարգի սահմանման>> և 15-րդ կետի <<որակի ստուգման կարգի սահմանման>> հիմքերում ինչ՞

	մասին» օրենքի նախագիծ	մեխանիզմներ են դրվելու: Ինչպիսի՞ փորձագիտական ինչ՞ աշխատանքների մասին է խոսքը, ովքեր են՞ իրականացնելու այդ փորձագիտական աշխատանքները կամ որակի ստուգումները:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 29-րդ հոդվածի 6-րդ մասի 17-րդ կետը: Որոնք՞ են <<Հիմնադրամի այլ մարմինները>> և ինչ՞ <<չվերապահված լիազորությունների>> մասին է խոսքը, եթե Հիմնադրամի կանոնադրության մեջ ամրագրվելու են Հիմնադրամի բոլոր հնարավոր լիազորությունները:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 30-րդ հոդվածի 8-րդ մասի <<թեկնածուների որակավորման կարգը հաստատում է Կառավարությունը>> դրույթը: Ինչպիսի՞ որակավորման մասին է խոսքը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս նույն հոդվածի 5-րդ մասում գլխավոր տնօրենի թեկնածուների համար պահանջները սահմանված են սույն օրենքում:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նաև նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ <<Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի գլխավոր տնօրենի մասնագիտական համապատասխանության և որակավորման պահանջները, գլխավոր տնօրենի թեկնածուների որակավորման կարգը.>>:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** խմբագրել նախագծի 35-րդ հոդվածի 4-րդ մասը: <<Ակտիվների կառավարիչ արտահայտությունը>> տեղին չի արձանագրված: Առաջարկում եմ քննարկել Հիմնադրամի բյուջեի ակտիվների կառավարման հարցը: Առաջարկում եմ նախագծի 35-րդ հոդվածի 4-րդ մասը խմբագրել հետևյալ կերպ. <<Պահուստային ֆոնդի ակտիվների կառավարումը կարող է իրականացվել Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված կարգով ընտրված ընկերության կառավարիչը:>>
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 36-րդ հոդվածի 2-րդ մասում <<Հիմնադրամը արտարժույթային պայմանագրեր կարող է կնքել օտարերկրյա պետական և մասնավոր ապահովագրական ընկերությունների և մատակարարների հետ>> դրույթը: Հիմնադրամը որ՞ դեպքերում կարող է կնքել պայմանագրեր օտարերկրյա պետական և մասնավոր ապահովագրական ընկերությունների հետ:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** նախագծի 40-րդ հոդվածի բոլոր մասերում <<Առողջապահության համապարփակ ապահովագրության հիմնադրամի>> բառերը փոխարինել <<Հիմնադրամի>> բառով, քանի որ նախագծի 3-րդ հոդվածի 8-րդ կետում արդեն սահմանված է <<Առողջապահության համապարփակ ապահովագրության հիմնադրամ (այսուհետ՝ Հիմնադրամ)>>:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում <<(այդ թվում՝ որակի)>> արտահայտության կիրառությունը: Որոնք՞ են

	ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	լինելու որակի նվազագույն պահանջները:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը: Արդյոք՞ կառավարությունը պետք է հաստատի միայն ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության համակարգում հաշվառված անձանց (ընտանիքը) համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից առողջության համապարփակ ապահովագրության ապահովագրավճարի վճարման դեպքերը: Կարծում եմ, որ պետք է հաստատել նաև պետության ֆինանսավորմամբ ապահովագրություն ստացող բոլոր շահառուների ապահովագրավճարի վճարման բոլոր դեպքերը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 40-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում արձանագրված <<փորձարարական ծրագիր>> հասկացությունը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** վերանայել նախագծի 47-րդ հոդվածի 1-ին մասում նշված <<մեկ տարի հետո>> ժամկետը:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** վերանայել նախագծի 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ժամկետները: Նախագծի 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում <<7-րդ և <<8-րդ>> բառերը տեղափոխել նախագծի 47-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ: Հիմնավորում: Ելնելով այն հանգամանքից, որ ընտանիքում երեք կամ ավելի անչափահաս երեխաների խնամք (խնամակալություն) իրականացնող ծնողներից (խնամակալներից) մեկի (7) և ծնողներից (որդեգրողներից) մեկը, որը հանդիսանում է անժամկետ հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով անձի խնամող (8) **շահառուների թիվը փոքր է, նրանց ապահովագրությունը սահմանել 2024 թվականի հուլիսի 1-ից:**
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** վերանայել նախագծի 48-րդ հոդվածով սահմանված անցումային դրույթները:

Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** նախագծի 41-րդ հոդվածի առաջին մասում <<վեճի քննությունը պարտադիր է>> բառերը փոխարինել <<վեճի քննությունն ու դրա արդյունքը պարտադիր է>> բառերով:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ և դրան հարակից բոլոր նախագծեր	**Առաջարկում եմ** վերանայել հիմնական նախագծի և դրան հարակից բոլոր նախագծերի անցումային դրույթներում <<ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո>> բառերը: Դրանից բխող վերանայել նաև մնացած բոլոր ժամկետները:
Նարեկ Զեյնալյան	«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծ և դրան հարակից բոլոր նախագծեր	Ելնելով նրանից, որ «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով ապահովագրական փաթեթը լիազոր մարմնի կողմից սահմանված ծառայությունների ցանկ է, **Առաջարկում եմ պարզաբանել** լինելու են առանձին հիվանդությունների համար ծառայությունների ընդգրկուն փաթեթներ: Ելնելով նաև նրանից, որ դեռևս բժշկական օգնության և սպասարկման գործելակարգերը հաստատված չեն, ինչպես են կազմակերպվելու պետական հոգացության տակ գտնվող պացիենտների /հոգեկան առողջության խնդիրներ ունեցող, թմրամոլությամբ տառապող, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և այլն/ բժշկական օգնությունն ու սպասարկումը:
Նարեկ Զեյնալյան	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** նախագծի 11-րդ հոդվածով շարադրվող «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> գործող օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասը խմբագրել այնպես, ինչպես այն ընդունվել է 2023 թվականի հոկտեմբերի 25-ին Ազգային ժողովում:
Նարեկ Զեյնալյան	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** հիմնավորել նախագծի 7-րդ հոդվածով շարադրվող 19-րդ հոդվածի <<բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների նվազագույն ծավալի շրջանակում>> դրույթը: Այդ սահմանումը տրված է «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 18-րդ կետում, որպես չապահովագրված անձանց պետության կողմից հատուցման ենթակա ծավալ: Մինչդեռ, նախագծի վերոնշյալ հոդվածը վերաբերում է Շրջապատի համար վտանգ ներկայացվող հիվանդություն ունեցող նաև ապահովագրված անձանց:

Նարեկ Զեյնալյան	<<**Թմրամիջոցների և հոգեմետ** (հոգեներգործուն) նյութերի մասին>> օրենքում փոփոխություններ կատարելոջ մասին>> օրենքների նախագծեր	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 2-րդ հոդվածով գործող օրենքի 49-րդ հոդվածի 7-րդ մասի համար առաջարկվող շարադրանքը: <<Պետությունն առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում թմրամոլությամբ հիվանդներին երաշխավորում է **համապատասխան** բժշկական օգնություն և սպասարկում:>>: Ինչ նկատի ունենք <<**համապատասխան** բժշկական օգնություն և սպասարկում>> ասելով: Արդյոք՞ վերոնշյալ դրույթը վերաբերում է **չապահովագրված** թմրամոլությամբ տառապող անձանց:
Նարեկ Զեյնալյան	<<**Հոգեբուժական օգնության** և սպասարկման մասին>> օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> և	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 1-ին հոդվածով գործող օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի առաջարկվող նոր շարադրանքը: <<Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքով նախատեսված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների նվազագույն ծավալների և լրացուցիչ ծառայությունների մեջ չընդգրկված հոգեբուժական բժշկական օգնության և սպասարկման տեսակները, հարբժշկական ծառայությունները իրականացվում են վճարովի հիմունքներով:>>: Արդյոք՞ վերոնշյալ դրույթը վերաբերում է **չապահովագրված** հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց:
Նարեկ Զեյնալյան	<<Դեղերի մասին>> օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի առաջին հոդվածով առաջարկվող 51-րդ հասկացության սահմանման մեջ բացակայում է <<հիվանդանոցային>> բառը, քանի որ հիվանդանոցային պայմաններով պայմանավորված ծառայություններում նույնպես ընդգրկված են դեղերով ապահովման ծառայություններ:
Նարեկ Զեյնալյան	<<Դեղերի մասին>> օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** հիմնավորել ապահովագրական փաթեթում ներառված դեղերի ցանկում դեղի՝ հենակետային գնի, հատուցման չափի և հատուցման առավելագույն չափի առկայության անհրաժեշտությունը:
Նարեկ Զեյնալյան	<<Դեղերի մասին>> օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի առաջին հոդվածով առաջարկվող 52-րդ հասկացության սահմանման մեջ <<ելակետային գին>> արտահայտությունը: Ենթադրելի է արդյոք՞, որ <<ելակետային գինը>> դա <<հենակետային գինն>> է:
Նարեկ Զեյնալյան	<<Դեղերի մասին>> օրենքում փոփոխություններ և	**Առաջարկում եմ** պարզաբանել, որ եթե հենակետային գինը, դա դեղի ձեռքբերման /ինվոյսի/ գինն է, ապա ինչ է հատուցման գինը և ինչ հատուցման մասին է խոսքը և, եթե դեղի գինը ավել է հատուցման գնից, ապա ենթադրվում է, որ տարբերությունը

	լրացումներ կատարելու մասին>> օրենքի նախագիծ	վճարելու է ապահովագրված անձը:
Նարեկ Զեյնալյան	<<Դեղերի մասին>> օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել նախագծի 10-րդ հոդվածի լիազոր մարմինը սահմանում է այն հիվանդությունների և վիճակների ցանկերը, որոնց դեպքում դեղերը տրամադրվելու են առողջության համապարփակ ապահովագրության փաթեթի շրջանակում: Ինչի՞ հիման վրա է լիազոր մարմինը սահմանելու այդ ցանկերը:
Նարեկ Զեյնալյան	<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին>> օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** նախագծի 1-ին հոդվածով շարադրվող օրենսգրքի 47.1-ին հոդվածում 3-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <<առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր դեպքի համար սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:>>:
Նարեկ Զեյնալյան	<<Փախստականների և ապաստանի մասին>> օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> օրենքի նախագիծ	**Առաջարկում եմ** պարզաբանել ինչ լրացուցիչ ծառայություններ են ստանալու փախստականի կարգավիճակ ունեցողները: